ԳԵՈՐԳԻԵՎՍԿԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ ՆՐԱ ԱՌԱՋԱԴԻՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

(Պայմանագրի 200-ամյակի առթիվ)

Վրացական ՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Ա. Ն. ՍՈՒՐԳՈՒԼԱՁԵ (Թբիլիսի)

Ռուսաստանի և Վրաստանի (Քարթլ-Կախեթի թագավորության) միջև 1783 թ. հունիսի 23-ին, Հյուսիսային Կովկասի Գեորգիևսկ ամրոցում կնքված պայմանագիրը խոշոր իրադարձություն հանդիսացավ վրաց ժողովրդի բազմադարյան պատմության մեջ։ Այդ ակտը վճռական դեր խաղաց Վրաստանի պատմական ճակատագրում։ Վրաստանի ողջ հետագա կյանքը անբաժանելիորեն կապվեց Ռուսաստանի հետ։ Վրաց ժողովուրդը հնարավորություն ստացավ ռուս ժողովրդի հետ մեկտեղ պայքարել ցարիզմի և կապիտալիզմի դեմ, նրա եղբայրական օգնությամբ թոթափել սոցիալական, գաղութային ճնշումը և կանգնել սոցիալիստական զարգացման ուղու վրա։

Գեորգիևսկի պայմանագիրը, որով Ռուսաստանն իր հովանավորության տակ էր վերցնում Վրաստանին, արդյունք էր մոսկովյան թագավորների և Վրաստանի քաղաքական գործիչների միջև եղած այն կապերի ու փոխհարաբերությունների, որոնք ընդարձակվում և ամրապնդվում էին շուրջ երեք հարյուր տարվա ընթացքում։ Այդ կապերը նպատակ ունեին ամրապնդել Ռուսաստանի դիրքերը Մեծավոր Արևելքի երկրներում և նոր հաջողությունների հասնել հարավային սահմանների ընդարձակման ու ապահովման համար մղած պայքարում, իսկ Վրաստանը ձգտում էր ճեղքել ագրեսիվ երկրների (Պարսկաստանի և Թուրքիայի) թշնամական օղակը, հաստատել խաղաղ կյանք, վերականգնել իր փոխհարաբերությունները քրիստոնեական քաղաքակիրթ աշխարհի հետ։

Գեորգիևսկի պայմանագիրը սովետական պատմագիտության մեջ միշտ բարձր է գնահատվել։ Այս հարցն ուսումնասիրողները, սակայն, պարտավոր են է՛լ ավելի խորությամբ ուսումնասիրել Վրաստանի՝ Ռուսաստանին միանալու պրոցեսի ողջ ընթացքը, օբյեկտիվորեն լուսաբանել և վերլուծել այն դրականը, որ հետևեց այս իրադարձությանը, նշել այն անսասան բարեկամությունը, որը միշտ օգնել է ռուս և վրաց ժողովուրդներին իրենց համատեղ պայքարում՝ հանուն ազատության և առաջադիմության։ Ռուսաստանի հետ միանալու շնորհիվ Վրաստանի ստացած շահեկան առավելությունները առաջին պլան մղելը ժամանակի կենսական պահանջն էր, բայց այդ ամենևին չի վկայում ցարիզմի նվաճողական քաղաքականության «առաջադիմականության» մասին, ինչպես այդ անում են որոշ հեղինակներ։ Երբ ցարական կառավարությունը հաստատվում էր Կովկասում, նա չէր ելնում քրիստոնյա եղբայրներին «օգնելու» ցանկությունից, ինչպես կեղծավորաբար հայտարարում էր Ալեքսանդր I ցարը 1801 թ. սեպտեմբերի 12-ի մանիֆեստում։ Ցարիզմի ներքին և արտաքին քաղաքականությունը արտացոլում էր նախ և առաջ ռուս ազնվականության շահերը։

Պատմության մեջ լինում են դեպքեր, երբ հակամարտ դասակարգային հասարակության մեջ տարբեր պետությունների իշխողների սուբյեկտիվ շահերը հանգեցնում են տրամագծորեն հակառակ օբյեկտիվ արդյունքների։ Օրինակ, հենց Ալեքսանդր I-ը, Ռուսաստանից նահանջող Նապոլեոնին հետապնդելով մտավ Փարիզ, նպատակ ունենալով վերականգնել Բուրբոններին և երկրում հաստատել ավատատիրական արիստոկրատիայի գերիշխանությու-

նը։ Սակայն նապոլեոնական կայսրության կործանումը, որում Ռուսաստանը վճռական դեր խաղաց, օբյեկտիվորեն առաջադիմական հետևանքների հանգեցրեց. «Կորսիկական հրեշի» ռազմական ուժով կազմակերպած կայսրությունը կազմալուծվեց և նվաճված ժողովուրդները ազատ շունչ քաշեցին։ Եվրոպայում սկսվեց ազգային պետությունների կազմավորման շրջան։ Մի այլ օրինակ. XIX դարի ռուս-թուրքական պատերազմները ինչպես ցարիզմի, այնպես էլ Թուրքիայի կողմից նվաճողական էին։ Բայց միևնույն ժամանակ այդ պատերազմները օբյեկտիվորեն ազատագրական դեր կատարեցին բալկանյան սլավոն ժողովուրդների և Կովկասի ժողովուրդների համար։ Հենց այդ պատերազմներն էլ թուրքական լծի տակ գտնվող և ազատության համար համառ պայքար մղող սլավոն ժողովուրդներին օգնեցին ազգային անկախություն ձեռք բերել։ Հիշյալ պատերազմների հետևանքով Կովկասի մի շարք ժողովուրդներ ետ ստացան իրենց վաղնջական հողերը։

Բանն այն է, որ Վրաստանը Ռուսաստանին միանալու արդյունքները իմաստավորելիս մենք չպետք է շփոթենք և նույնացնենք երկու միանգամայն տարբեր հասկացություններ՝ ցարիզմի սուբյեկտիվ նպատակները, նրա գաղութատիրական քաղաքականության հետադիմական էությունը և ռուս և վրաց ժողովուրդների համատեղ կյանքի օբյեկտիվ առաջադիմական հետևանքները։ Այս երկու հասկացությունները իրար հետ ոչ մի ընդհանրություն չունեն։

Իսկ ո՞րն է Վրաստանը Ռուսաստանին միանալու գլխավոր օբյեկտիվ-առաջադիմական հետևանքը.

1. Վրաստանը, որ հանուն ազատության ու անկախության դարեր շարունակ անհաշտ պայքար էր մղում բազմաթիվ օտար նվաճողների դեմ, ձեռք բերեց խաղաղություն, խաղաղ կյանքի հնարավորություն։ Իլյա Ճավճավաձեի խոսքերով ասած «վաղուց արդեն հանգստից զուրկ, հոգնած երկիրը հանդարտվեց, հանգստացավ ավերումից ու ամայացումից, անվերջ պատերազմներից ու պայքարից։ Զքացավ մեր երկրի և մեր ընտանիքների վրա բարձրացված թշնամու սրի փայլը, վերացան բոցկլտող հրդեհները, որոնց մեջ կործանվում էին մեր նախնիների տներն ու ունեցվածքը, հավիտենականության գիրկն անցան թալանչիական ասպատակությունները, որ թողել են լոկ սարսափելի և ցնցող հիշողություններ։ Եկան նոր ժամանակները, խաղաղության և անվտանգության ժամանակները արյունաքամ և խաշված Վրաստանի համար, որը ստեղծված էր երկրային դրախտ լինելու, բայց որը համարյա թե եղբայրական գերեզման էր դառնում նրա անձնազոհ զավակների համար, որոնք մեռնում էին առանց օգնության ու հույսի, մենության մեջ, բոլորից հեռու... Հաստատվեց խաղաղ կյանքի սահմանը։ Այդ օրվանից ոչ ոք չհամարձակվեց այդ սահմանն անցնել հրով ու սրով»[1]։

Խաղաղություն ձեռք բերելով՝ երկիրն արագությամբ բռնեց տնտեսական վերելքի ուղին։ Աճեց բնակչության թիվը, վերածնվեցին թշնամու կողմից ամայացված գյուղերը, առաջացան նոր քաղաքներ։ Տնտեսական առաջընթացը ապամանավորեց կուլտուրական զարգացումը։

2. Մտնելով Ռուսաստանի կազմի մեջ, Վրաստանը կարողացավ վերականգնել իր ազգային ամբողջականությունը և իր պատմական սահմանների դգալի մասը։ Դեռևս մոնղոլների տիրապետության շրջանում սկսվեց վրացական պետության քայքայումը առանձին թագավորությունների և իշխանությունների, որոնց միջև չէին գագարում եղբայրասպան պատերազմներն ու սրցակցությունը։ Երկպառակությունները արյունաքամ էին արել երկիրը, արգելակում էին արտադողական ուժերի զարգացումը, արտաքին թշնամիներին հնարավորություն էին տալիս գրավել ու թալանել վրացական հողերը։ Այս ծանր ժամանակաշրջանում Վրաստանը կորցրեց իր մի շարք տիրույթները, որ գրավեցին թուրք նվաճողները։ Վրացական թագավորությունների ու

[1] Летопись дружбы. Тбилиси, 1961, с. 102—103.

իշխանությունների անջատվածությունը դյուրացնում էր պարսկական սարբ-կացնողների ամայացնող հարձակումները Քարթլիի և Կախեթի վրա, իսկ թուրքերի հարձակումները՝ Արևմտյան և Հարավային Վրաստանի վրա։ Ռուսաստանին միանալով Վրաստանը միավորվեց։ Թուրքիայի հետ մղած պատերազմում Ռուսաստանի ունեցած հաջողությունները ապահովեցին Վրաստանի վերահաստատումն իր պատմական սահմաններում, ոչնչացման դատապարտված բնակչությունը փրկվեց։

3. Ռուսաստանի հետ համատեղ կյանքի շնորհիվ արագացավ Վրաստանի սոցիալական զարգացումը։ Մինչ այդ, Իրանի և Օսմանյան կայսրության միջև չդադարող պատերազմների պայմաններում երկրի արտադրողական ուժերը, տնտեսական կյանքը անկում էին ապրում։ Վրաստանը հեռու էր մընացել տասաշխարհային տնտեսական զարգացումից և չէր կարող համահավասար քայլել։ Նոր պայմաններում նա ներգրավվեց Ռուսաստանի ու Եվրոպայի տնտեսական փոխհարաբերությունների մեջ, նրա տնտեսության վերելքը պայմանավորեց ապրանքադրամային հարաբերությունների զարգացումը, զարգացավ կապիտալիստական տնտեսաձևը, հասունացավ ֆեոդալիզմի ճգնաժամը և այն վերացնելու անհրաժեշտություն առաջացավ։ Ճորտատիրության վերացումը վրացական հողերը միացրեց միասնական տնտեսական սիստեմով և պայմանավորեց դրա հետագա առաջընթացը։

4. XIX դարում Ռուսաստանի հետ համատեղ կյանքի պայմաններում ավարտվեց վրաց ազգի համախմբման երկարատև պատմական պրոցեսը։ Այն ձևավորվեց որպես բուրժուական ազգ։ Ցարիզմի ու շահագործող կարգերի դեմ ռուս և վրաց ժողովուրդների համատեղ պայքարի շնորհիվ Վրաստանում բարենպաստ պայմաններ առաջացան միասնական տերիտորիա և էկոնոմիկա, միասնական լեզու, ինչպես նաև հոգևոր կյանքի պատմաէթնիկական ամուր ընդհանրություն ստեղծելու համար։ Վրաց ժողովրդի, որպես բուրժուական ազգի կազմավորումը առաջացրեց նրա ինքնագիտակցության զարգացումը. նա պատրաստ սոցիալական և ազգային ճնշման դեմ։

5. Վրաստանի միացումը Ռուսաստանին նպաստեց վրացական մշակույթի վերածնմանն ու զարգացմանը։ Անվիճելի է, որ վրացական մշակույթի բազմադարյան պատմության մեջ XIX դարը հանդիսանում է միանգամայն բացառիկ։ Վրաստանը նախասովետական շրջանի և ոչ մի ժամանակահատվածում հոգևոր կյանքի այդպիսի հզոր վերելք չի ապրել, ինչպես XIX դարում։ Այդ հարյուրամյակում Վրաստանին հաջողվեց հոգևոր կուլտուրայի բրնագավառում կանգնել աշխարհի առաջավոր երկրների շարքում։ Մշակույթի այդպիսի արագ զարգացումը և բարձր մակարդակը պայմանավորվեցին ոչ միայն դարաշրջանի բնույթով և վրացական մշակույթի հնագույն արդասավոր ավանդույթներով, այլև նրանով, որ Վրաստանը դուրս եկավ մեկուսացումից, մտավ հավատակից Ռուսաստանի կազմի մեջ և այս ճանապարհով՝ նաև եվրոպական հոգևոր աշխարհը։ Վրացական մշակույթի վերածնության գործում վճռական դեր խաղաց իր բնույթով ճորտատիրության ու ինքնակալության դեմ ուղղված ռուսական դեմոկրատական մշակույթը։

6. Սոցիալական անարդարության ընդհանուր վիճակը և ադատության համատեղ ձգտումը պայմանավորեցին և ամրապնդեցին ռուս և վրաց ժողովուրդների մարտական դաշինքը։ Վրացական մտավորականությունը Ռուսաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում հաղորդակցվեց հեղափոխական-դեմոկրատական գաղափարախոսությանը և դարձավ նրա կրակոտ պրոպագանդիստը։ Վրաց ժողովրդի ազգային-ադատագրական պայքարը XIX դարում հետևանքն ու անքակտելի բաղադրիչ մասն էր այն պայքարի, որ մղում էր ռուս ժողովուրդը ցարիզմի դեմ՝ դեկաբրիստներից սկսած մինչև «Նարոդնայա վոլյայի» հերոսները։

Այս մարտական ընկերակցությունը է՛լ ավելի ամրապնդվեց և մի նոր աստիճանի բարձրացավ բանվոր դասակարգի առաջացումից և բանվորական շարժման սկսվելուց հետո, երբ Վ. Ի. Լենինի կողմից ստեղծված նոր տիպի

կուսակցությունը գլխավորեց Ռուսական կայսրության ճնշված մասսաների ազատագրման վեհ գործը։ Ռուսաստանի և նրա ծայրամասերի դաղութային ժողովուրդների այս մարտական համագործակցության մեջ ծնվեց Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը, որն ազատություն ու երջանկություն բերեց նախկին Ռուսական կայսրության ժողովուրդներին, այդ թվում և վրաց ժողովրդին։

Այսպիսին է պատմական ճշմարտությունը և այս ճշմարտության լույսի տակ հատկապես ակնառու են դառնում պատմական այն աղեռն ու չարիքը, որոնք XIII—XVIII դդ. արտաքին քաղաքական իրավիճակի անբարենպաստության պատճառով սև ամպի պես կախվել էին հայրենիքի վրա։ Վրաստանի համար դժբախտություն էր քաղաքական մասնատվածությունը, երկպառակությունը, անտեսական անկումը, ժողովրդի բնաջնջումը և մշակույթի օջախների ոչնչացումը։ Ագրեսիվ հարևանները (Թուրքիա, Պարսկաստան) և իշխանատենչ վրաց ազնվականները երկիրը հասցրին այդպիսի թշվառության։ Ռուսաստանին միանալը փրկեց Վրաստանը, և դա մեծ բարիք էր, որը չեն կարող նսեմացնել ինքնակալության գաղութարարական և ձուլման միտումները։ Ինչ վերաբերում է ցարիզմին, ապա նա խախտեց բարեկամության և հավասարության մասին 1783 թ. պայմանագիրը, որը ներքին անկախություն էր նախատեսում Քարթլ-Կախեթի թագավորության համար։ 1801 թ. մանիֆեստը Վրաստանում ստեղծեց Ռուսաստանի ներքին նահանգներին բնորոշ վարչություն։ Հետդհետ վերացվեց Արևմտյան Վրաստանի թագավորությունների և իշխանությունների ներքին ինքնավարությունը, և Կովկասը ամբողջովին վերածվեց ցարիզմի «ներքին գաղութի»։ Վ. Ի. Լենինը «ներքին գաղութներ» էր անվանում ազգային այն ծայրամասերը, որ ցարիզմը միացրել էր Ռուսաստանին XVII—XIX դդ. (Ուկրաինան, Բելոռուսիան, Մերձբալթյան երկրները, Անդրկովկասն ու Միջին Ասիան)։ Դրանք, սակայն, խիստ տարբերվում էին այն գաղութներից, որոնք եվրոպական երկրները գրավել էին կապիտալի նախնական կուտակման ժամանակ։ «Ներքին գաղութները», իհարկե, չէին ենթարկվում այն վայրի թալանին ու բռնությանը, որին ենթարկվում էին եվրոպական երկների գաղութները Ասիայում ու Աֆրիկայում։

Ռուսական կայսրության կազմում գտնվող ոչ ռուս ժողովուրդները, այդ թվում նաև վրացիները, անդուլ պայքար էին մղում ցարիզմի գաղութատիրական քաղաքականության և նրա ասիմիլյատորական ձգտումների դեմ։ Այդ պայքարում Վրաստանը ձգտում էր ոչ թե անջատվողականության, այլ 1783 թ. տրակտատով նախատեսված միության և փոխհարաբերության։ Հենց սա է այն ազգային-ազատագրական շարժման հիմնական բովանդակությունը, որը բնութագրում է վրացական հասարակական կյանքը XIX դարի 30-ական թվականներից ընդհուպ մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը։

Վրացական ազգային-ազատագրական պայքարը ևս ուներ երեք շրջան (ազնվականական, ռևոլյուցիոն-դեմոկրատական և պրոլետարական) և հանդիսանում էր համառուսական ազատագրական շարժման անխզելի բաղադրիչ մասը, շարժում, որն ուղղված էր ցարիզմի, կալվածատերերի ու կապիտալիստական ճնշման դեմ։ Ցարիզմի տապալման և սոցիալական ու ազգային ազատության հաստատման ընդհանուր նպատակը պայմանավորեց Ռուսական կայսրության կազմի մեջ մտնող բոլոր ժողովուրդների մարտական ընկերակցությունը։ Վ. Ի. Լենինի առաջնորդությամբ, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ իրագործված Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը փառքով պսակեց այդ պայքարը։

XIX—XX դդ. մինչհեղափոխական Վրաստանում տեղի ունեցած տարբեր քաղաքական ու հասարակական երևույթները պետք է արժեքավորվեն հենց այս նախադրյալների լույսի ներքո։ Հայտնի է, որ XIX դարի առաջին կեսի ողջ ընթացքում Վրաստանում բոցավառվում էր գյուղացիական ապստամբու-

թյունների կրակը։ Վարչակարգի դեմ եղած այս ելույթները (լեռնային Վրաստանում 1804 թ., Կախեթում՝ 1812 թ., Իմերեթիայում՝ 1819—1820 թթ., Գուրրայում՝ 1841 թ.), այն զայրույթի արտահայտությունն էր, որ սոցիալական ու ազգային ճնշումների պատճառով տարերայնորեն ծագել էր վրաց գյուղացիության շրջանում։ Այդ ապստամբությունները մեկուսացված բնույթ չէին կրում։ Թալանչի չինովնիկների և անհոգի ճորտատերերի ձեռքին տանջահար գյուղացիները ապստամբելով՝ փրկություն էին որոնում Ռուսաստանում։ Ելույթներ էր ունենում նաև վրաց ազնվականությունը, հույս ունենալով ռուսական կալվածատերերի հետ համահավասար իրավունքներ ձեռք բերել։ Վրացական ազնվականությունը առաջին անգամ խոովություն կազմակերպեց 1801 թ. հրովարտակից մեկ տարի անց, սակայն այդ ելույթը համապատասխանում էր լոկ ավատատիրական փոքր վերնախավի շահերին և, չնայած անջատվողական ձգտումների բացակայությանը, այնուամենայնիվ հետադիմական բնույթ ուներ։

Բոլորովին այլ երևույթ էր 1832 թ. դավադրությունը, որին մասնակցում էին 30-ական թթ. Վրաստանի բոլոր ականավոր գործիչները։ Այդ դավադրությունը հասունացավ Պետերբուրգում ու Մոսկվայում կրթություն ստացած ազնվականության շրջանում, որը լավ ծանոթ էր ռուսական ազատագրական գաղափարախոսությանը և համակրում էր դրան։ Դավադրության մասնակիցները գաղափարապես մոտ էին դեկաբրիստներին, Եվրոպայի 1820—30-ական թթ. ազատագրական շարժմանը։ Ակտիվ դավադիրները վրացական առաջին թերթի և առաջին գրական ամսագրի խմբագրությունների դեկավարներն էին։

Չնայած կրած անհաջողությանը, այդ դավադրությունը հոգեբանական ազդեցություն ունեցավ վրաց ժողովրդի մտավոր կյանքի վրա և արագացրեց նրա առաջադիմությունը։ 1930-ական թթ. վրացական սովետական պատմագրությունը, գտնվելով վուլգար-սոցիոլոգիզմի ազդեցության ներքո, բացասաբար էր գնահատում 1832 թ. դավադրությունը։ Վրացական սովետական ժամանակակից պատմագրությունը վաղուց ի վեր վերանայել է այդ սխալ գնահատականը և այժմ բոլորի կողմից ընդունվում է 1832 թ. շարժման առաջադիմական բնույթը։ Վերն ասածից ելնելով կարելի է զարմանալ որոշ հեղինակների այն պնդումների վրա, թե իբր վրաց լուսավորյալ ազնվականները, 1832 թ. դավադրության նախաձեռնողները հետադեմ էին։ Ով որ պնդում է, թե 1832 թ. դավադրությունը ունեցել է հետադիմական բնույթ, նա պետք է հետադիմական համարի նաև Վրաստանի XIX դարի 30-ական թթ. այնպիսի փառապանծ գործիչների գործունեությունը, ինչպիսիք էին Ա. Ճավճավաձեն, Գ. Օրբելիանին, Ս. Դոդաշվիլին, Գ. Էրիսթավին, Դ. Ղիփիանին, Ա. Օրբելիանին, ինչպես նաև նրանց գաղափարական ժառանգորդ Ն. Բարաթաշվիլին։

Կասկած չպետք է հարուցի և այն, որ ռոմանտիզմը վրացական գրականության մեջ XIX դարի 30-ական թթ. վրացական առաջադիմական գործիչների քաղաքական ռոմանտիզմի արգասիքն էր, այն գործիչների, որոնք հանդիսանում էին ազգային-ազատագրական շարժման առաջին շրջանի խոշոր ներկայացուցիչները, որ հող պատրաստեցին XIX դարի 60—70-ական թթ. ազգային մեծ շարժման համար։

Ազգային-ազատագրական շարժման հետևյալ շրջանը սկսվում է XIX դարի 60-ական թվականներից, երբ Վրաստանում հասարակական կյանքի ասպարեզ իջավ «թերգդալեուլեբիի» պանծալի սերունդը Իլյա Ճավճավաձեի գլխավորությամբ։ Այս սերունդը զգալիորեն հաղթահարեց նախորդ սերնդի սոցիալական պահպանողականությունը և առաջնահերթ խնդիր դարձրեց ճորտատիրական կարգերի վերացումը, ազգի ինքնադիտակցության արթնացումը և ցարիզմի դեմ վճռական պայքարի նախապատրաստությունը։

Ցարիզմի դեմ ելնելով, ո՛չ Իլյա Ճավճավաձեն, ո՛չ էլ նրա համախոհներ Ակակի Ծերեթելին, Նիկո Նիկոլաձեն, Գեորգի Ծերեթելին, Յակով Գոգեբաշվիլին, Սերգեյ Մեսխին, Վաժա Փշավելան և ուրիշներ երբեք ժողովրդին չկոչեցին անջատվողականության։ Նրանք խորապես գիտակցեցին Ռուսաստանին

միանալու բարեր ազդեցությունը և երկու ժողովուրդների համատեղ կյանքի պատմական անհրաժեշտությունը։ «Մենք պետք է մեզ պատկանենք» նշանաբանը ոչ թե Ռուսաստանից անջատվելու կոչ էր, այլ ցարիզմի դեմ ռուսական հեղափոխական ռազմնոչին փառապանծ սերնդի վարած վճռական պայքարում վրացական ու ռուսական դեմոկրատական ուժերի միասնության կոչ։

Անհիմն են որոշ ուսումնասիրողների պնդումները, թե իբր «Թերգդալեուլեբինները» սեպարատիստներ (անջատողականներ) էին, թե, օրինակ, Ակակի Ծերեթելին Վրաստանը համարում էր անկախությունը կորցրած «հիվանդ»։ «Թերգդալեուլեբիների» ստեղծագործությունը և պրակտիկ գործունեությունը պերճախոս ապացույցն են այն բանի, որ նրանք լի էին պատմական լավատեսությամբ։ Նրանք չէին ողբում «հիվանդ» Վրաստանին, այլ նրան պատրաստում էին գալիք պայքարի համար և հավատացած էին, որ Ռուսաստանին միանալը վրաց ժողովրդին կուրս կորցեց ասիական խավարից և մացրեց կուլտուրական այն մեծ ոլորտը, որում եվրոպական մեծ պետությունների հետ գտնվում էր նաև մտավորական Ռուսաստանը, և որ վերջինիս միանալուց հետո Վրաստանը հաղորդակից դարձավ ապատագրական պաղափարներին և նրա մտավոր կյանքը սկսեց զարգանալ վերընթաց ուղիով։

Ի. Ճավճավաձեն և Ա. Ծերեթելին ապրեցին մինչև վրաց ժողովրդի միասնական մարտական պոռթկումը, որի մասին 1860-ական թթ. նրանք կարող էին լոկ երազել։ «Այս օրվան սպասեցի ու հասա, ծիծաղում ու այլևս լաց չեմ լինում հա»,— ուրախության արցունքներն աչքերին գոչում էր Ակակի Ծերեթելին 1905 թ.։

Ցարիզմի դեմ պայքարում ռուս և վրաց ժողովուրդների դեմոկրատական ուժերի մատական դաշինքի անհրաժեշտությունը վառ կերպով ցույց են տրվել վրացական նարոդնիկները, որոնք այն ժամանակ ազգային հարցը ոչ հիմնական դիտելով՝ իրենց գլխավոր նպատակն էին համարում ինքնակալության տապալումը։

Ռուսաստանի հետ Վրաստանի միավորման նշանակությունը գնահատելու հարցում դիշտ դիրքորոշում ունեցան վրաց մարքսիստները, որոնք ազգային հարցը ենթարկեցին պրոլետարիատի դասակարգային պայքարին։ Այդ պայքարը պահանջում էր Ռուսական բազմազգ կայսրության հեղափոխական ուժերի համախմբում, պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարների պաշտպանություն և լայն պրոպագանդա։

Վրաց մարքսիստ-լենինյանները անհաշտ պայքար հայտարարեցին ազգայնականությանը։ Նրանք իրենց անհետաձգելի խնդիրն էին համարում Վրաստանի աշխատավորության հեղափոխական շարժումը միավորել Ռուսաստանի բանվորական շարժման հետ, կալվածատերերի ու բուրժուազիայի միացյալ ճակատին հակադրել պրոլետարիատի ու գյուղացիության միացյալ ճակատը։ Նրանք այս տեսակետից էին դիտում Վրաստանի միացումը Ռուսաստանին։ 1901 թ. ցարիզմը հանդիսավորությամբ նշեց Ռուսաստանի հետ Վրաստանի միավորման 100-ամյակը։ Այդ ակտը մեկնաբանելիս ռուսական պաշտոնական պատմագիտությունը իր ուշադրությունը կենտրոնացրեց ռուսական ինքնակալության «վեհանձն առաքելության» վրա։ Այս տեսակետը պաշտպանում էր նաև վրաց ազնվականության որոշ մասը, որն ի դեմս ցարիզմի տեսնում էր իր պաշտպանին՝ դեմոկրատական ուժերի դեմ պայքարի գործում։ Բոլշևիկյան «Բրձոլա» («Պայքար») թերթը խիստ քննադատեց վրաց ազնվականության այդ դիրքորոշումը, մերկացրեց ցարիզմի կողմից իրականացվող ազգային ճնշումների քաղաքականությունը, բայց միաժամանակ Ռուսաստանի հետ Վրաստանի միավորումը իր օբյեկտիվ արդյունքներով դրական գնահատվեց։ Վրացական մարքսիստ-լենինյանները Ռուսաստանի հետ միավորման պրոգրեսիվ նշանակության հարցում հաստատուն դիրք բռնեցին։ Դա լիովին բաժանում էր նաև վրաց դեմոկրատական մտավորականությունը, որը կրելով կրկնակի ճնշման լուծը, բնականաբար, կանգնած էր արմատական դիրքերի վրա։ Նա ակտիվ ուժ էր ռուսական առաջին հեղափոխության ժա-

մանակ, բարձրացնում էր ժողովրդի հեղափոխական գիտակցությունն ու խիզախությունը։ Ճիշտ է, դեմոկրատական մտավորականության ղդալի մասը միավորված էր մանրբուրժուական կուսակցություններում, բայց ցարիզմի դեմ պայքարում նա ևս հանդես էր գալիս որպես մարքս-լենինյան կուսակցության դաշնակից։

Վրաց ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի ոչ մի փուլում բնորոշ չի եղել Ռուսաստանից անջատվելու ձգտումը։ Երկիրը սոցիալական և ազգային ճնշումից ազատագրելու համար մղված պայքարում Վրաստանի հայրենասերները միշտ ուս-ուսի կանգնած են եղել Ռուսաստանի հեղափոխական ուժերի հետ և գտնում էին, որ պայծառ ապագայի համար պայքարում նրանք ընդհանուր և միասնական ճակատ ունեն։

1783 թ. տրակտատը շրջադարձ էր վրաց ժողովրդի պատմական ճակատագրում, այն ռուս և վրաց ժողովուրդների բարեկամության և եղբայրական միասնության հիմքը դրեց։

* * *

Գեորգիևսկի համաձայնագիրը առաջադիմական երևույթ հանդիսացավ ոչ միայն վրաց ժողովրդի, այլև Անդրկովկասի բոլոր ժողովուրդների սոցիալ-տնտեսական և օտարաքական-մշակութային կյանքում։ Նա հիմք դրեց ռուս մեծ ժողովրդի և Անդրկովկասի ժողովուրդների անքակտելի կապին, նա օգնեց հայ և ադրբեջանական ժողովուրդներին դուրս գալու թշնամական շրջապատումից և պաշտպանելու իրենց անկախությունը, պահպանելու և զարգացնելու իրենց ինքնատիպ և հարուստ ազգային մշակույթը։

Անդրկովկասի ժողովուրդները մոնղոլների տիրապետության անկումից հետո ենթարկվել են պարսկական և թուրքական նվաճողների հարձակումներին ու թալանին։ Ադրբեջանում կառավարում էին պարսկական բեկերը, որոնք բնակչությանը թալանում էին բազմապիսի եղանակներով։ Ադրբեջանի էկոնոմիկան լրիվ անկում էր ապրում անընդհատ ասպատակությունների, երկպառակչական պատերազմների ու թալանի պատճառով։ XVIII դարի 20-ական թվականներից ադրբեջանական ժողովրդի դրությունը էլ ավելի վատթարացավ թուրքական զավթիչների ներխուժման պատճառով։ Ադրբեջանական ժողովուրդը անձնազոհ պայքարում էր զավթիչների դեմ, սակայն հյուծված, տնտեսապես հետամնաց ու ընկճված ժողովուրդ սեփական ուժերով ի վիճակի չէր վոնդել ուժեղ ու դաժան հակառակորդին։

Ավելի ողբերգական եղավ հայ ժողովրդի ճակատագիրը. 1514 թ. և հետագայում՝ 1533—1535 թթ. թուրքական զորքերը գավթեցին Արևմտյան Հայաստանը։ Անդրկովկասի արևմտյան մասը մնաց Թուրքիայի տիրապետության տակ, իսկ Ադրբեջանը, Արևելյան Վրաստանը և Արևելյան Հայաստանը՝ Պարսկաստանի։ Թուրք և քուրդ շեյխերը Արևմտյան Հայաստանի բնակչությանը թալանում էին ու անխնա ոչնչացնում, հրով ու սրով մահմեդականություն էին տարածում, իսկ պարսկական բեկերն ու խաները կողոպտում էին Արևելյան Հայաստանը։ Հայ ժողովուրդը երբեք չի հաշտվել թուրքական և պարսկական դիկտատի հետ, բայց զավթիչների դեմ ծավալած ապստամբությունները հաջողություն չունեցան։ Հայ հայրենասերները օգնություն ստանալու համար բազմիցս դիմեցին արևմտյան երկրներին, սակայն այդ փորձերը ոչ մի գործնական արդյունք չտվին։ Հայաստանի ազատագրման միակ իրական ուժը Ռուսաստանն էր։

Անդրկովկասի ժողովուրդներից XVIII դարի վերջում իր ազգային անկախությունը պահպանել էր միայն վրաց ժողովուրդը։ Բայց Վրաստանը, ինչպես և Անդրկովկասի մյուս երկրները դարձել էին Իրանի և Թուրքիայի նվաճողական մշտական պատերազմների ասպարեզ, որի պատճառով երկրի տնտեսական ու մշակութային կյանքը խիստ անկում էր ապրում։ Այսպիսի օրհասական պայմաններում Անդրկովկասի ժողովուրդների առաջավոր քաղաքական գործիչների հայացքները ուղղվեցին դեպի ռուսական պետությունը։

Ազատագրման հույսը թևավորել էր Կախեթի թագավոր Լևանին, երբ նա Մոսկվա՝ Իվան IV-ի մոտ ուղարկեց դեսպաններին։ Դրան էր ձգտում Ալեքսանդր II թագավորը, երբ նա 1587 թ. ռուսական ցարից հովանավորություն էր խնդրում։ Դրան էին ձգտում Թեյմուրազ I-ը, Արչիլ թագավորը, իմերեթական թագավորներ Ալեքսանդր V-ը և Սողոմոն II-ը։ Հայ ազատագրական շարժման գործիչները և Վախթանգ VI թագավորը գլխավորեցին Անդրկովկասի ժողովուրդների դինված ուժերը Պետրոս I-ի պարսկական արշավանքի ժամանակ։ Նրանց օգնում էին Մոսկվայի, Պետերբուրգի, Ուկրաինայի վրացական ու հայկական գաղթօջախները։ Սակայն, այնուամենայնիվ՝ Ռուսաստանի հետ Անդրկովկասի ժողովուրդների փոխհարաբերությունները մինչև XVIII դարի վերջը հիմնականում ընթանում էին դիվանագիտական աջակցության շրջանակներում։

1783 թ. Գեորգիևսկի հրովարտակից հետո ռուս և անդրկովկասյան ժողովուրդների սերտ միացման ուղիներ ուրվագծվեցին։ 1801 թ. Արևելյան Վրաստանը մտավ Ռուսական կայսրության կազմի մեջ։ Դրան հետևեց Գյուլիստանի պայմանագիրը, որով Ռուսական կայսրության մեջ ընդգրկվեցին Ղարաբաղի, Գյանջայի, Շեքիի, Շիրվանի, Դերբենտի, Կուտինի, Բաքվի և Թալիշի խանությունները և ամբողջ Դաղստանը։ Ռուս-պարսկական (1826—1828) և ռուս-թուրքական (1828—1829) պատերազմների հետևանքով Արևելյան Հայաստանը միացավ Ռուսաստանին, և Անդրկովկասը վերջնականապես ազատագրվեց օտար լծից։

Անդրկովկասի միացումը Ռուսաստանին նպաստեց երկրի էկոնոմիկայի և մշակույթի վերածնությանն ու արագ զարգացմանը։ Ռուսաստանի հետ Անդրկովկասի միավորման առաջադիմական հետևանքներից մեկը եղավ Անդրկովկասում դեմոկրատական հասարակական-քաղաքական մտքի ձևավորումը։ Ս. Դոդաշվիլին և Ն. Բատաթաշվիլին, Միրզա Ֆաթալի Ախունդովն ու Աբաս Կուլի-Աղա Բաքիխանովը, Խաչատուր Աբովյանը և շատ ուրիշներ ազատագրական շարժման առաջին շրջանի ռուսական գործիչների նման ժողովրդին ներարկում էին դեմոկրատական գաղափարներ։ Ազատագրական շարժման երկրորդ՝ ռազնոչինյան շրջանում Զևոնիշևսկու և Գերցենի հետ, հանդես էին գալիս Ի. Ճավճավաձեն և Ա. Ծերեթելին, Ն. Նիկոլաձեն, Հասան Բեկ Զարդաբին, Միքայել Նալբանդյանը և ուրիշներ, որոնք խորապես հավատացած էին, որ անդրկովկասյան ժողովուրդների ազատագրումը սոցիալական ու ազգային ճնշումից հնարավոր է միայն ռուս հեղափոխականների հետ համատեղ պայքարով։ Այս ականավոր հայրենասերները խորապես գիտակցում էին Անդրկովկասը Ռուսաստանին միանալու բարերար ազդեցությունը և այդ ժողովուրդների համատեղ կյանքի պատմական անհրաժեշտությունը։ Նրանք կոչ էին անում հեղափոխական-դեմոկրատական ուժերին միավորվել և վճռական պայքար մղել ցարիզմի դեմ։

Ազատագրական շարժման երրորդ՝ ավարտական շրջանում, երբ Ռուսական կայսրության բանվոր դասակարգն ու գյուղացիությունը ոտքի ելան ցարիզմի և կապիտալիզմի դեմ, Անդրկովկասի աշխատավորական մասսաները հայտնվեցին այդ պայքարի առաջատար դիրքերում։ Եվ դա օրինաչափ էր։ Դրանում դրսևորվեց ժողովրդական մասսաների և նրա առաջավոր մտավորականության պայքարի մեծ փորձը։

Քննելով Անդրկովկասում նոր պրոգրեսիվ դարաշրջանի սոցիալ-քաղաքական նախադրյալները և հետազոտելով նրա խոր արմատները, մենք գրաց ակունքները տեսնում ենք Գեորգիևսկի պայմանագրում, որը առաջինը հռչակեց երկու ժողովուրդների բարեկամությունը և պատմական շրջադարձ հանդիսացավ վրաց և Անդրկովկասի մյուս ժողովուրդների ճակատագրում։